

**Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության, (Handyside v UK), 1976, Application No. 5493/72 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)**

Ներպետական դատարանը մեղադրական դատավճիռ էր կայացրել դիմումատուի նկատմամբ անպարկեշտ գիրք հրատարակելու համար:

Թեմա՝	այլ բովանդակային սահմանափակումներ
Ենթաթեմա՝	հանրության բարքերը
Թեսթ՝	անհրաժեշտությունը
Սանկցիա՝	արգելք/կասեցում/առգրավում
Վճիռ՝	խոսքի ազատության խախտում առկա չէ, տասներեք ձայն ընդդեմ մեկի
Իրավասություն՝	Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Միացյալ Թագավորություն

**Գործի փաստական հանգամանքները**

Դիմումատուն՝ մի հրատարակչական ընկերություն, հրատարակում է «Կարմիր գրքույկ» կոչված գիրքը եւ տարածում այն տասներկուսից բարձր տարիքի երեխաների շրջանում: Գիրքը գլուխներ է ներառում սեռական կյանքի, ինչպես նաեւ ենթագլուխներ այնպիսի թեմաների մասին, ինչպիսիք են պոռնոգրաֆիան, միասեռականությունը, աբորտը, ձեռնաշարժությունը եւ այլն: Գիրքն առաջին անգամ լույս էր տեսել Դանիայում, իսկ հետո, թարգմանվելուց եւ որոշակի փոփոխություններից հետո՝ Բելգիայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Հունաստանում, Իսլանդիայում, Իտալիայում, Նիդերլանդներում, Նորվեգիայում, Շվեդիայում եւ Շվեյցարիայում, ինչպես նաեւ մի քանի ոչ եվրոպական պետություններում: Այն ազատորեն շրջանառության մեջ էր Ավստրիայում եւ Լյուքսեմբուրգում: Դիմումատուի դեմ բազմաթիվ բողոքներից հետո նրա հրատարակչության տարածքը խուզարկության են ենթարկում եւ գրքի տպաքանակն առգրավում: Դիմումատուն կանգնում է դատարանի առջեւ եւ մեղավոր ճանաչվում շահույթ ստանալու նպատակով հրապարակման ենթակա անպարկեշտ գրականություն պահելու մեջ: Նրան տուգանում են եւ պարտավորեցնում փոխհատուցել դատական ծախսերը: Դատարանն ընդունում է նաեւ գրքերը բռնագրավելու եւ ոստիկանության կողմից ոչնչացնելու մասին որոշում: Հետագայում, այն բանից հետո, երբ տեքստում կատարվում են որոշակի փոփոխություններ եւ որոշ վրդովեցուցիչ տողեր վերաձեւակերպվում են կամ տեքստից հանվում, լույս է տեսնում գրքի փոփոխված տարբերակը:

## **ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը**

Դիմումատուին մեղավոր ճանաչելը միջամտություն է նրա՝ արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը, որը «սահմանված է եղել օրենքով» եւ հետապնդել է բարոյականությունը պաշտպանելու իրավաչափ նպատակ: Հարցն այն է, թե արդյոք միջամտությունն «անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում»:

## **Անհրաժեշտությունը**

ՄԻԵԴ-ը գտել է, որ «բարոյականության պաշտպանության» ոլորտում անհնար է տարբեր մասնակից պետությունների ներպետական օրենքներում գտնել միատեսակ եվրոպական մոտեցում: Հետեւաբար՝ իրենց երկրների կենսական ուժերի հետ անմիջական եւ շարունակական կապերի շնորհիվ այդ պետությունները պետք է ունենան «հայեցողության լուսանցք», որի շրջանակներում կկարողանան մեկնաբանել, թե արդյոք կոնկրետ միջոցը «անհրաժեշտ» է: Միեւնույն ժամանակ, ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ «անհրաժեշտության» թեսթը խիստ թեսթ է. մինչ «անհրաժեշտ» ածականը «անպայմանորեն անհրաժեշտի», «բացարձակ անհրաժեշտի» եւ «խստիվ անհրաժեշտի» հոմանիշը չէ, այն չունի նաեւ այնպիսի արտահայտությունների ճկունությունը, ինչպիսիք են «ընդունելին», «սովորականը», «օգտակարը», «ողջամիտը» կամ «ցանկալին» (48-րդ պարբերություն):

ՄԻԵԴ-ն այնուհետեւ ընդգծել է, որ անհրաժեշտ է լրջագույն ուշադրություն դարձնել «ժողովրդավարական հասարակությունը» բնութագրող սկզբունքներին:

«Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնասյուներից է եւ նրա առաջընթացի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլեւ այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»: Սա, ի թիվս այլ հարցերի, նշանակում է, որ այս ոլորտում կիրառվող ցանկացած «ձեւականություն», «պայման» կամ «պատիժ» պետք է համաչափ լինի իր առջեւ դրված իրավաչափ նպատակին» (49-րդ պարբերություն):

ՄԻԵԴ-ն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել այն փաստին, որ գիրքն առաջին հերթին նախատեսված էր երեխաների եւ տասներկուսից տասնչորս տարեկան դեռահասների համար: Իր ոճի մեջ լինելով ուղղակի, փաստական եւ շատ տարրական, այն հեշտորեն ընկալելի էր լինելու այդ տարիքային խմբի նույնիսկ ամենափոքր ընթերցողի համար: Դիմումատուն հստակորեն նշել էր, որ ծրագրում էր գրքի համար ապահովել լայն շրջանառություն, եւ, այն լայնորեն գովազդելով, դրել էր գրքի խիստ համեստ վաճառքային գին ու ընտրել վերնագիր, որը ենթադրում էր, որ գիրքը դպրոցում կիրառության համար նախատեսված մի ձեռնարկ է: Մինչ գիրքը պարունակում էր զուտ փաստական տեղեկություններ, որոնք, ընդհանուր առմամբ, ճիշտ էին եւ օգտակար, այն նաեւ ուներ հատվածներ, որոնք դեռահասներն իրենց զարգացման կրիտիկական փուլում կարող էին մեկնաբանել որպես խրախուսանք ժամանակից շուտ այնպիսի կենսակերպով ապրելու հարցում, որը կարող էր վնասել նրանց: Նրանք նույնիսկ կարող էին կատարել որոշակի քրեական արարքներ: Ավելին, ՄԻԵԴ-ը համարել է, որ այն փաստը, որ որեւէ վարույթ չի հարուցվել գրքի վերահրատարակված տարբերակի առիթով, վկայում է այն մասին, որ իշխանությունները ցանկացել են սահմանափակվել միայն այնպիսի միջոցներով, որոնք խստիվ անհրաժեշտ են:

Այդ պատճառով ՄԻԵԴ-ը գտել է, որ արտահայտվելու ազատության իրավունքի խախտում առկա չէ:

<http://ela.am/hy/2011/09/24/handyside-v-uk-%D5%B0%D5%A5%D5%B6%D5%A4%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B5%D5%A4%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%A4%D5%A5%D5%B4-%D5%B4%D5%AB%D5%A1%D6%81%D5%B5%D5%A1%D5%AC-%D5%A9%D5%A1%D5%A3%D5%A1%D5%BE%D5%B8/>